

ոսկին կտակ մըն է հանդուցեալին կողմէ, իսկ իր ընտանիքը առող չի գոհանար, կուզէ նուէրնէր ալ ընել. այսպէս արծաթէ սկիհ մը՝ Յովհաննէս աղայի յիշատակին Ս. Օդսն եկեղեցւոյն, իսկ զաւակներուն՝ Բարունակին և Երուանդին համար ալ մէյմէկ արծաթէ գեղեցիկ կանթեղ կը նուիրէ Ս. Յովհաննէս եկեղեցւոյն և Ս. Փրկչի վանքին:

— Յունաստանի մէջ դործով և առևտուրով հաստատուած ազգայինները իրենց յատուկ եկեղեցի չունենալով, կրօնական միջոցառումներէ զրկուած էին. Ալեքսը թէ այդ ազգայիններէն մէկ քանի բարեկեցիկներ Աթէնքի մէջ տուն մը վարձելով մատուակ վերածած են, հոգևոր հովիւ կարգելով Արծրունի Գրեգոր քահանան, Հողաբարձութիւն մըն ալ կազմուէր է այդ մատուակն մատակարարութեան համար:

— Բաղէշի Ս. Խնդրակատար վանքին ազգորբանոցին որբերու թիւը 42 էն 45-ի բարձրացեր է այս տարի: Այս որբերուն մէջ կը գտնուի Սըղեբղի առաջնորդարանէն յանձնարարուած նորամկրտեալ մը, ներսէս Գրեգորեան անունով: Որբանոցին նոր հոգաբարձութիւնը ձեռքէն եկածը չի զլանար իր վարած հաստատութիւնը նախանձելի վիճակի մը մէջ գնելու համար: Պատրիարքարանը 10 ոսկի յատկացուցած է այդ որբանոցին:



ՔՆՆՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ.

Գ.

Բառին սկիզբը՝

1.—ս. Օր. սեհրակ՝ դատարկ. սիգ՝ դէզ. սեղիկ՝ դեղին. սօնեղ՝ դուռն և լին. և լին:

2.—դ. այսպէս են եղած՝ դադնսան՝ գասաստան. դեվ՝ դև (Գորիս սկվ. պրս. dēv), բրդի՝ (Գորիս զրբի)՝ դէպ՝ ի:

Բառին մէջը և վերջը՝

1. Բ ձայնէն յետոյ կը վերածուի ր-ի. եղած օրինակներն են՝ մ'րբոր՝ արգար. իվրիօրք (թ. բվիօրք)՝ աւելորդ. պիւրք՝ բուրդ. փրքի՝ բրգել. հիւրք (Գ. հերք)՝ երգ. երգել. իւրքիւնը (թ. իւրքուներ. Գ. իւրքիւն)՝ երգումն. գրքիւն՝ զարգարել. կնքի՝ կարգաւ. գրքնարտ՝ ծառագարգար. մարք՝ մարդ. վրքիւն՝ վարդապետ. վարք՝ վարդ. դօրք՝ դօրք. ուղղօրք, ուղիղ:

2. Ն ձայնէն յետոյ կը մնայ դ. եղած օրինակներն են՝ հունդ (Գ. հանդ)՝ անդ, արտ. փրքիւնդան՝ բարեկեցական. րիւնդ՝ թունդ, խիստ (պրս. tund). լիդիք՝ լինդ, ընդերք. պրիւնդ՝ պինդ. սննդադ՝ սանդուխ. օրիւնդ՝ անդ. ֆանդի՝ քանդել:

3. Ն և յաջորդ ր ձայներուն մէջտեղ մըտած է թարմատար դ մը. այսպէս են՝ ծանդր՝ ծանր. ձնդրանայ՝ ծանրանալ. ծօնդր՝ ծունր:

- 4. Ասոնցմէ զուրս ունինք նաև դ՝ խնդրիս կէս գրական բառին մէջ. ս՝ խիստի՝ խեղդել բառին մէջ. ր՝ փրկոյ՝ գալու ձևին մէջ և մ՝ փոխան՝ փոխինդ բառին մէջ:

Զ.

Ամէն գիւրջի մէջ ալ անփոփոխ կը մնայ. Օր. զիմքու՝ զորանչ. զիւրից՝ զրոյց. կիգոր՝ գազար. հող՝ հաղ. արտ՝ երազ. պարգ՝ պարզ, յատակ:

Թ.

Սովորաբար կը մնայ ր. Օր. քօթ թթու. բրքրնադե՝ թիթեռնիկ. քօթ թութ. փրքի՝ փաթաթել. օր՝ ութ և լին:

2. Խ ձայնէն յետոյ ս-ի է վերածուած յաջորդ ձևերուն մէջ. իխք՝ եօթն. ուխտնաւուն (Գ. սխտնաւուն)՝ եօթնասուն. քօխ՝ թուղթ:

Ըստ այսմ՝ Արք. յիխի՝ յաղթել բառը կուգայ նախաւոր \* յիխի՝ ձևէ մը, և ձայնին ջնջմամբ. հմմտ. Պոլսոյ բարբառով կիսի՝ յաղթել:

3. Սկզբնատառ ր վերածուած է ս-ի՝ օրնքրի՝ թմրել, թմրել ձևին մէջ:

4. Թ ջնջուած է ձկոյր կամ ձկոյր բառին մէջ. հմմտ. Արք. կիկընր, կիկընր. Թաղտի բարբառով ձկընր:

5. Թս խումբը վերածուած է ցց-ի. հմմտ. վնցցուն՝ վաթսուն. ասոր հետևողութեամբ նաև իցցուն՝ յիսուն, նախաւոր \* իքսուն ձևէ մը: Այս մասին տես նաև բազմ 1897, 261 ք:

Ժ.

Ամէն գիւրջով ալ անփոփոխ կը մնայ. Օր. ծանողք՝ ծառանդ. ծամ՝ ծամ (եկեղեցի). խիծը՝ խէծ. օմ՝ այծ. կիծ՝ գիծ և լին:

Լ.

Ամէն գիւրջով անփոփոխ պահուած է. Օր. լիկ՝ լեղի. լիպի՝ լեզու. լիւծ՝ լուծ. ճիլի՝ հայելի. ճիլիկընր՝ ոլոռն. միւլի՝ մլաւել. կիւլ՝ գայլ. ծեկ՝ ուաւել և լին:

2. Լ կրկնուած է իլլիլի՝ լալել. հրլիծիկ՝ ոլորել. լրլիծի (կայ նաև լրկօր)՝ սալոր, շոր բառերուն մէջ:

3. «Ալիւր» բառին յ ձայնը անփոփոխ մընացած է Գորիսի բարբառին նոյնն, նոյնն ձևերուն մէջ բայց Թաղոսի նոյնն ձևին մէջ վերածուած է կրկին յ-ի իսկ ի յ կրկին ձայներուն է փոխուած Ա.բ. նոյնն ձևին մէջ:

4. «Աինել» բառին նախատառ յը ջնջուած է ընդհանուր Արաբազի ընկն ձևին մէջ:

Խ.

1. Առհասարակ կը մնայ իւ Օր. իշեյնէ՛յ խլինք. խմօր՝ խմոր. խօրերն՝ խուրձ. խոխոյ՛ խախալ, մաղ. վախ՛ հմ. բօն՛ թուխ ւնն:

2. իւ, իս, իս ձայները Արաբազի բարբառին մէջ կը դառնան շիս, սիս, իս, այսպէս՝ նրիւշար՛ նշխարք. նիւշար՛ աշխարհ. շիւշարկ՛ աշխատել. բոխշի՛ բաշխել. վրիխմար՛ ոշխար. քիշ անգամ նաև սխօս, աւելի զործածական է խսօս՝ հմ. ուղղագոյն ձևը:

3. Օ ձայնէն յետոյ իւ աւելցուած է ծիւր՝ եօթն, ուխտնստն՝ եօթնաստուն, օխտր՝ օձ ձևերուն մէջ:

4. «Խաղող» բառը զործածական է թէ խնդուց և թէ հնդուց ձևով: Ի-ի վերածուած իւ ձայնին ուրիշ օրինակ չկայ:

6. Արդի գրականին «անդուխ» և «ածուխ» ձևերուն դէմ՝ որոնք գրաբար կը գրուին թէ իւ և թէ զ տառով, Արաբազի բարբառն ունի անդուդ և անձուդ:

Ծ.

1. — ծ. Օր. ծրկ՝ ծիծ. ծրձո՞ղի՛ ծիծաղել. ծծի՛ ծծել. ծոծ կամ ծօ՞՞ ծուծ. կծօ՛ կծու ւնն:

2. — ձ. այսպէս են անձուդ՝ ածուխ՝ և սընդականին յաջորդելուն համար. Աստուածանի՛ն՝ Աստուածաձին՝ անձուստ՝ անաստուած. թէ և կայ Ա՛ստուծ՝ Աստուած, որ ծ ձայնը անփոփոխ է պահած:

3. — ց. այսպէս են ցրցեանակ՝ ծիծեանակ. իսկ Գորիսի բարբառով նաև փանցիս՝ փայծաղն, որ այլուր փանցիք ձևն ունի:

4. — ծծ. այս կրկնութիւնը տեղի է ունեցած միմիայն մրծծ՝ մեծ բառին մէջ (Թաղոսից ունին պարզապէս մրծ), բայց նոյն բառէն մրծանալ՝ մեծանալ և մրծարկ՝ մեծարել, մշտ մէկ ծ-ով:

5. — ս. միայն ծնակի՛ ծածկել բառին մէջ յաջորդ բաղաձայնին պատճառաւ. հմտ. հին հայերէն կսկիծ\* կծկիծ. կսկուծ\* կծկուծ ւնն:

Արաբազի բարբառն ունի նաև ուրիշ օրինակ մը՝ պրծիկ՝ ուր ծ ձայնին բաղաձայն մը կը յաջորդէ, բայց այս տեղ ծ անփոփոխ մնացած է, փոխանակ ս-ի վերածուելու:

6. — գ. այս ալ տեղի է ունեցած միայն գրգարառ՝ ծագարգար բառին մէջ (հմտ. Պօլտոյ

բարբառով՝ զարգարար). այս փոփոխութիւնն ալ յաջորդ գ-ին համար ըլլալու է:

7. ծ ձայնը տեղափոխութիւն է կրած կծկիք կամ կծկիք՝ ճկոյթ ձևին մէջ՝ որ կը ծաղի ծկոյթ ձևէն. Թաղոսից ունին ծկիքն՝ առանց տեղափոխութեան:

Կ.

1. Ամէն գիրքով ալ առհասարակ կը մնայ կ. Օր. կօրեգ՝ կորեգ. կօ՛՛ կուծ. կօց՝ կուց. պիսկ՝ բողկ. մօկնր՝ մուկն. ծյակնր՝ ձուկն. միրս՝ հմ. ւնն:

2. Մ կամ և ձայնէն յետոյ կը վերածուի գ. եղած օրինակներն են՝ խօնգ՝ խունկ. արտունգ արմու(ն)կ. արգիւն՝ անկիւն, կողմ. սնցի՛ անկել. կրկեր՝ ընկեր. մրդիկ՝ մկրտել. անգուն՝ կամ անջուգ՝ ախանջ.— կամ գյ. ինչպէս՝ իւսնրցոյ՛ լուսընկայ. անցոյ՛ ճանկ.

3. — ևկն վերջաւորող բառերը այս խումբը կը վերածեն նգնր, նգնր, յնր, գնր ձևերուն. եղած օրինակներն են. Ա.բ. սոյնր, սօնգնր, Թ.գ. սոյնր, Գ. սօնգնր՝ սունկն. Ա.բ. կրօնր, Թ.գ. կրօնր, Գ. կրօնր՝ կրունկն. Ա.բ. յնր, Թ.գ. յնր, Գ. յնգնր՝ ունկն (ամանկ). Ա.բ. Թ.գ. ծօնր, ծօնգնր, Գ. ծօնգնր՝ ծունկն:

4. Բառավերջի — իկ մասնիկը Արաբազի բարբառին մէջ կը դառնայ կյց, կց, ից: Օրինակներն են՝ ծնակց՝ ծաղիկ. սեպկց՝ բոպիկ. զհօկց՝ զատիկ. կրեկց՝ կնիկ և կն. կրեկց՝ կծիկ. սեց, սեցց՝ սիկ. յեղծեկց, ղօնեկց՝ աղանիկ-կ. իրկց՝ իւ, իւկ. նիւիկց՝ աղջիկ. դնգիկց՝ կուլիկ (կուլ): Գորիս այս գյ ձայներուն դէմ կը հանէ պարզապէս կ. ինչպէս ծնակի, պիսիկ ւնն:

Բացառաբար «թիթեանիկ» կըլլայ բրբանդի:

— կկ վերջացող բառերէն ալ միայն երկուքը են թարկուած են նոյն փոփոխութեան. այն է՝ յեղծեկց՝ երեկ. շեկց՝ շէկ. իսկ անփոփոխ մնացած են կիկ՝ կայեկ, կօրեկ՝ կորեկ, կրեկ. ցիւրկ՝ ցերեկ:

Ակ, ուկ վերջացող բառերը այս ձայնափոխութենէն բոլորովին ազատ կը մնան:

5. Բառին սկիզբը դտնուած կ ձայնը յաջորդ ր, յ, շ ձայներէն անմիջապէս առաջ կը վերածուի ի-ի. այսպէս են՝ իւրակ՝ կաշաղակ. իւկ՝ կեկ. իրեկ՝ կթել. իրօց՝ կթոց. իրեկ՝ կշուլ. իրեկ՝ կշուլ. Բառին մէջը կամ վերջը նոյն տառերէն առաջ անփոփոխ կը մնայ:

6. Քանի մը բառերու մէջ յ ի յաջորդող կ ձայնը վերածուած է գ-ի. այդ բառերն են՝ փրգիւն՝ բարեկենդան. յրգիւր՝ երկեր. յրգիւն՝ երկինք. յրիւրիւ՝ երեկոյ. յրեկի կամ կրեկի՛ կերակ. յիւրց՝ գրեկ. նմրգի՛ նարկէս: Բայց այս ձայնաջրջութիւնը ընդհանուր չէ ամէն յ ի յաջորդ

կ-երուն. որովհետև ասանց հախառակ ունինք կնիւնս, դարկի՛ ուղորկել, անկար՝ երկաթ, երկան՝ երկայն ևն ևն:

7. կ=ղ ունին դնգլից (կայ նաև կնգլից)՝ կուղ, կուղիկ և քրմնդե՛ թիթեռնիկ:

8. «Եկեղեցի» բառն մէջ կ անճեա կորսուած է. հմմտ. Աբբ. յիսծե, Թղ. յիսցե, Գ. յիսծի, յիսցի:

9. Գնգի՛ ողնի բառն սկիզբը աւելորդ կ մը գրուած է:

10. Քյրնչիք՝ կնծիթն, սուսամ բառը առնուած է թուրքերէնէ. ըստ այսմ կ=յ համարելու չէ:

11. Կ վերածուած է կյ ձայնին կյմփիտ՝ կարմիր և կյմ՝ պիտ՝ կապոյտ(ասիէ կյրպիլ՝ կապուտանալ) բառերուն մէջ:

2.

Բառին սկիզբը՝

1. Առ հասարակ անփոփոխ կը մնայ. Օր. հմ՛րիտ՝ հարիւր. հիշչարակ՝ հրեշտակ. հեռու՝ հեռու. հոկմ՝ հունմ ևն:

2. Գոց վանկի մէջ ո ձայնէն անմիջապէս առաջ կը վերածուի վ-ի. այսպէս են՝ վրեկ՝ հող, վրեհ՝ հոտ, վրեհ՝ հոր՝ որմը ուրիշ բարբառներու մէջ ժող, ժոս, ժու ձևերն են առած: «Հողի» բառը բաց վանկով լինելուն համար այս փոփոխութիւնը չէ կրած. այսպէս՝ Աբբ. հիսփի, Թղ. հեփի. Գ. հիփի:

3. Սկզբնաձայն հ-ն ի-ի է փոխուած իւրը-փոխ կամ խորփոխ (Թղ. և Գ. իւրփոխ)՝ հարբուխ բառն մէջ. հ=ի ձայնափոխութեան ուրիշ օրինակ չկայ. այս օրինակն ալ կրնայ վաւերական ըլլալ, որովհետև հնն մատենագրութեան մէջ թէ՛ փարբուխ և թէ՛ «հարբուխ» ձևերը գործածական են միանգամայն:

4. Նախաձայն հ-ի տեղափոխութիւն կայ մրեար՝ համար, վասն բառն մէջ. բայց այս տեղափոխութենէն ազատ մնացած է ասոր արմատակից հրմբարեկ՝ համարել ձևը

5. Նախաշունչ հ-ի ջնջում տեղի ունեցած է դորփեր՝ հօրեղջայր բառն մէջ՝ որ զօրեղ աղ-ձատում կրած է:

6. Չայնաւորով սկսած խու մը մը բառերու սկիզբը աւելցած է հ ձայնը, բայց առանց որոշ պայմանի մը. այդ բառերն են՝ հմ՛րի՝ ազի. հլկ-փուր (Թղ. հլիփուր, Գ. հլիփուր)՝ ալուր. հմնկի՝ ամաչել, հմնօր (Գ. հմնօր)՝ ամօթ. հմնի (Գ. հմնի)՝ անդ, արտ. հմնեհ՝ աներ. հմնեծ՝ անիծ. հմցրեկ (Թղ. ընցրեկ)՝ անցանել. հմ՛րփի՝ արբենալ. հմ-փուս՝ ամբ. հրեհրակ (Թղ. ընեհրակ. Գ. ինեհրակ)՝ երանի. հիթ (Թղ. հիթի. Գ. հեփի)՝ երբ. հիտր (Գ. հեհր)՝ երդել. հեհեկ (Գ. հեհեկ)՝ երկնջ. հրեհր՝

ընկեր. հիմն՝ ինչ. հոնց՝ անց. հիշեհմը (Գ. հիշեհմը)՝ ոլտն. հլիհորեկ՝ ոլորել. հեոլ (Գ. հեոլ)՝ օլ. հիլիսիփ՝ ոլտնք. հոլոլ (Թ. Գ. հոլոլ)՝ ուղեղ. հիե՝ ուղե- հոեկ՝ (Գ. հոեի)՝ սուլ. հորեփ (Գ. հորեփ)՝ ուբալ:

Նոյն հ- ձայնը աւելցած է նաև բաղաձայնով սկսող «ըպարայ» պարայ բառն սկիզբը.

Բառն մէջը՝

1. Այս դերբով ալ հ անփոփոխ պահուած է միշտ. Օր. մնակ՝ մահակ. պոսնակ՝ պատուհան. շնակնփուր՝ շնորհաւոր ևն:

2. Ինչպէս շատ բարբառներու, նոյնպէս ալ Աարաբաղի բարբառն մէջ «օրհնել» բառը վերածուած է ծրեկ ձևին.

3. Սկզբնփոխ՝ սերկելի բառն մէջ աւելորդ հ ձայնն է մտած:

Բառն վերջը՝

1. հ բառն վերջը՝ ձայնաւորէ ետք անփոփոխ մնացած է. եղած օրինակներն են՝ նգան՝ հմ. սրահ՝ բակ (հայ. սրահ ձևէն). պիհ՝ բահ. ահ՝ ահ, երկել:

2. Իսկ բաղաձայնէ վերջ կամ յօրնակիէ ր-էն առաջ ջնջուած է. այսպէս ունինք՝ նշխարփ՝ աշխարհ-ք. շնոփ՝ շնորհ-ք. պափ՝ պահ-ք. յեշնեք նաև աննպատ՝ ձանապարհ՝ որ հ-ն փոխանակ ջնջելու տեղափոխած է:

2.

1. 2 բառն սկիզբը կը վերածուի ծ-ի. Օր. ծեհ՝ ձայն. ծի՝ ձի. ծիկեր (Թղ. ծիկեր)՝ ձուկն. ծի՝ ձու ևն:

2. Բառն մէջը կամ վերջը՝ հ ձայնէն յետոյ կը մնայ մ. եղած օրինակները տես էջ 25:

3. Բ ձայնէն յետոյ կը վերածուի ց-ի. եղած օրինակներն են՝ պեց (Գ. պոց)՝ բարձ. պեցիտ (Գ. պոցր. Թղ. պեցուր)՝ բարձ. պցնակ՝ բարձրանալ. վրեց (Թղ. վրց)՝ որձ. վրեցակ կամ վրեցակ՝ որձակ, աքաղաղ:

Այսպէս եղած է նաև ցիլ՝ ձգել բառն մէջ:

4. ի ձայնէն ետք մ վերածուած է ծ-ի. այսպէս են՝ մաիծ՝ մաղձ. փիծ՝ օձ. վերջինս Գորիսի բարբառով պարզապէս օց:

5. «Թուրմն» բառն մէջ մ վերածուելով ր-ի, բառս եղած է խորեր:

6. Զրկրոսալ՝ քերթալ (հայ. ձգալ ձևէն) բառն մէջ ալ մ=զ:

Գ.

1. Սովորաբար անփոփոխ կը մնայ. Օր. յրիկ՝ յիւ. դարկի՛ ուղորկել. հնգուղ՝ կաղոց. մնսաղ՝ հմ. խաղ՝ հմ. տղա՝ աղայ ևն:

2. Բախող բաղաձայններէն անմիջապէս առաջ գտնուած դձայնը կը վերածուի խ-ի խոկնոյն բաղաձայնը՝ ո՛ր աստիճանին ալ որ պատկանի կը վերածուի ճարի (իմա անշունչ խուլ—sourde non - aspirée): Ահաւաստիկ գտնուած օրինակները՝

- բ—Ա՛խպիւր՝ աղբիւր. անպիւր՝ եղբայր.
- գ—շնիկամ՝ շաղգամ.
- կ—պիկակ՝ բողկ.
- ֆ—սիկակ՝ մեղք. ճիկակ՝ ճեղք. անպիստ՝ աղքատ.
- կօխակ՝ կողք.
- դ—խիխակի՛ խեղդեի.
- ս—յիյիս՝ աղա.
- բ—բօբոս՝ Թուղթ.
- ձ—միսիձ՝ մաղձ.
- ջ—նիսիջի՛, անսիսի՛ աղջիկ.
- ց—յիսիցի՛ եկեղեցի.

Բացառապէս խ-ի չեն վերածուած խեղձ՝ խեղձ. օղձ՝ ուղա. կեղծավրէ՛ կեղծաւոր բառերուն դ-երը: Ասոնց վրայ աւելցնենք նաև Գորիսի բարբառով յեղձ՝ աղա, փոխանակ կանոնաւոր յիյիս ձեկն: որ այլուր գործածական է:

«Յաղթել» բառը Ղարաբաղի բարբառին մէջ երկու ձե է առած. հնարիկ և յիսկի. ասոնցմէ առաջինը գրական արտասանութեամբ է: ուստի մեր հաշուէն դուրս կը մնայ. երկրորդը կը ծագի հնագոյն \* յիսկի՛ ձեկ մը (հմմտ. Պօլսոց բարբառով կիսկի), որով համաձայն է վերի կանոնին:

3. Ղ-ը անփոփոխ կը մնայ միւս բաղաձայններուն քով. այսպէս՝ ձեղնը՝ ճիւղ. անղիս՝ աղուէս. միղր՝ մեղր. կնղրիկ՝ կաղնի ևլն:

«Փայծաղն» բառը թէև ըուն Ղարաբաղի բարբառին մէջ ունի կանոնաւոր փնձեղնը ձեք, սակայն Գորիսի բարբառով ստացած է կանոնին հակառակ փնցիկը ձեք:

4. Ղ, ձայնը ջնջած են խմտակ՝ խղճմտանք, խիղճ մտաց. դորր՝ ուղղորդ, ուղիղ. նոյա կամ ո՛յո՛ւ՝ ալ տղայ, ծօ՛. առաջինին մէջ այս կորուստը տեղի ունեցած է բաղաձայններու խճողման պատճառաւ. իսկ միւսները շատ յաճախ գործածութեան պատճառաւ սղուած են:

5. Ղ, ձայնը տեղափոխութիւն է կրած պրօտոյ՝ պղտոր և դօրփէր՝ հօրեղբայր բառերուն մէջ:

Ճ.

1. Բառին սկիզբը, վերջը, իսկ բառի մէջ ձայնաւորի քով կը մնայ ձ. Օր. անպատ՝ հմ. անհնապա՛ ճանապարհ. անմ՛նիլ՝ ճանաչել. անօձ անկի՛ որոճալ. կարձ՛ հմ. մաձ՛ հմ. կօնակ՝ կոճակ. հնձար՝ հմ. կնկղակ՝ կճղակ ևլն:

2. Բառի մէջ բաղաձայնէ անմիջապէս առաջ գտնուելով կը վերածուի ծ-ի. ասոր համար ունինք երկու ապահով օրինակ. խմտակ՝ խղճմտանք, խիղճ մտաց. կօնկի՛ կոճկել, կոճակել:

3. Ռնգականէ յետոյ կը վերածուի ը-ի եղած օրինակներն են՝ ճտեղ կամ ճտեղ՝ ճանձ. մորձանն՝ մեղրանձ, մեղու. պատմեանն՝ պատմեանն: Իսկ յընթիւր՝ կնճիթ՝ սուսամ բառը Թուրքերէնէ է:

4. ձ նոյնպէս ը-ի է վերածուած սարլան, տարլան՝ աստիճան բառին մէջ:

5. ձ վերածուած է ը-ի յիստակ՝ ճախարակ և իկվ՛ կճեպ բառերուն մէջ. երկուքն մէջ ալ ը ֆ և յ ձայնները իրարու վրայ ազդած են փոխադարձաբար:

6. Կծիցեր, կծեղնը՝ ճկոյթ բառը իսկապէս կը ծագի «ճկոյթ» ձեկն՝ որ նոյնպէս գործածական է մեր հին մատենագրութեան մէջ. ըստ այսմ ձ=ծ համարելու չէ:

Մ.

1. Անփոփոխ կը մնայ ամէն դիրքի մէջ աւօր. մանկը՝ մասն. մրօ՛ մօրուք. կյու՛ գում. կյունալ՛ գումէլ. կրեկզման՝ գերեզման ևլն:

2. Վ-ի է փոխուած կնվնը՝ կամն և վրկնը՝ մըջին բառերուն մէջ. առաջինը ըուն Ղարաբաղոց ձեկն է: բայց Թաղոսցիք ունին կանոնաւոր կնվնը. ընդհակառակը երկրորդը Թաղոսոց ձեկն է: որու փոխարէն ըուն Ղարաբաղն ունի կանոնաւոր մրկնը ձեք:

3. Աւելորդ մ ստացած են անմեկ՝ ամէն, ամենայն. ինչպէս և Գորիսեցոց պրանձիկ՝ պպանձիկ, խըմըրմ՝ հո՛ խանձարհոտ բառերը:

4. Մ-ի տեղափոխութիւն են կրած մրհար՝ համար, վասն և մնան՝ նման բառերը:

Յ.

Բառամէջի և բառավերջի յ ձայններուն վրայ արդէն խօսուած է այս գլխին երկարբառներու բաժնին մէջ. կը մնայ մեզ ուրեմն խօսիլ նախաձայն յ-ի մասին:

Բառասկիզբի յ-ն երեք տեսակ փոփոխութիւն է կրած: ինչպէս ուրիշ բարբառներու՝ նոյնպէս և Ղարաբաղի բարբառին մէջ, հետեւեալ կերպով.

1. Ամէնէն աւելի՛ սովորական ձեք ջնջուան է. այսպէս են անօղակ (Թ.Պ. ըձօղակ)՝ յաջողակ. անալ՛ յառաջ. անալ՛ յատակ. անանակ (Թ.Պ. ըվանակ)՝ յաւանակ. անրունց (Գ. իւշունց)՝ յեշոց, հայհոյանք. իցուն՝ յետուն. դնիկի՛ յուղարկել. կօզի՛ ուզել, ինդրել (զբբ. «յուզել» ձեկն). իսակ՛ յըտակ. ան՛ յօնք:

2. և հնչումն ունին հնարիկ՛ յաղթել (ըուն Ղարաբաղի ձեք յիսկի). յիսկանք՝ յանցանք. հիսար՛ յիմար. հօձար՛ յօձար: Բոլոր այս ձեքերը իսկապէս ընկի չեն, այլ փոխառութիւն են գրական հայերէնէ:

3. Յ ձայնը (կարգա եւրոպական y) պահուած է միայն երեք ձևերու մէջ. այն է. յիսմի՛ յաղթե՛լ. յիս՛ յետոյ. յըզի՛ յղի:

(Շարունակութիւն)

Հրաշեայ Յ. Աճառեան.



### ԵՐԿՐԱԳՈՐԺԱԿԱՆ ԱՆՀՐԱԹԵՇՏ

#### ԳԻՏԵԼԻԲՆԵՐ.

(Շարունակութիւն) \*

ՊՆԱՍՏԱԿԱՐ ՄԻՋԱՑՆԵՐ, ԿԵՆԴՐԱՆՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ԴԷՄ ԿՌՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ.

« Եւ հասուցից մեզ փոխանակ ամացն յորս եկե՛ր մարտիսն եւ յորեակն եւ գրութիւնն եւ խառնիճն: Յոպի, Բ. 25:

Ա. Մարտի. Անշուշտ ամենքինս ինչ հասակի կուզի լինի՛ ծանօթ կլինի այս աւերիչ միջատի անուներ: Սա տարածուած է համարեա ամբողջ երկրագնդի երեսինս. Եւրոպայի Ասիայի Աֆրիկայի և Ամերիկայի զանազան տեղերը շատ անգամ ենթակայ են եղել այս արգարեւ զարհուրելի միջատի կործանիչ յարձակմունքներին: Գիտեն նաև շատերը որ նորա սիրելի կերակուրը հասկաւոր բոյսերն են: Աւելի սակաւ են վնասուում նրանից սև ցորենը (ձիակորեկ), վուշը, կանեփը և բանջարեղէնները: Բայց եթէ մորեխը չկարողանայ ձեռք բերել իր սիրած կերակուրը, այն ժամանակ նա ոչ միայն ամենայն տեսակ թաքմ բոյսերի, այլ նաև չորացածների վերայ ևս կսկսի յարձակուիլ: Պաղատու այգիներն ևս շատ անգամ ենթակայ են լինում նորա աւերիչ ազդեցութեանց: Մորեխն ուտում է ծառերի տերեւները կռծում է մատաղ բնձիւղների կեղևը և ոչնչացնում խաղողենու պրտուղները և տերեւների կանթերը: Եւ որովհետև խաղողի ձի գնում կերակուրի մէջ, ուստի և աւելի սարսափելի է թւում այդ

միջատը: Խիստ շատակերութեամբ աչքի են ընկնում հեռաքառ բնաջ մորեխի թրթուրները բայց շնորհիւ զանդաղ և կանոնաւոր ընթացքինս նրանց յարձակմունքները չեն կարող այնպէս երկիւղ պատճառել ազդարնակութեանը ինչպէս թեւաւոր կամ թափառական մորեխներինց բաղկացած մի սև ամպի անսպասելի երեւոյր, որ իջնելով երկրի վերայ, միանգամից ոչնչացնում է ամբողջ զաշտեր, մերկացնում է անտառներ և այգիներ: Ամէն տեղ, երբ գիւղացիները հորիզոնի վրայ նկատում են մորեխի մի այդպիսի սոսկալի ամպ, շտապում են դաշտ և ճիչ ու ազդարակ բարձրացնելով, աւելներ, փայտեր, ծղոնի փառուած խուրցեր շարժելով աշխատում են վախեցնել յառաջացող թշնամունս հեռացնել նրան իրենց ցանքերից: Թէպէտ երբեմն նրանց յաջողուել է այս միջոցով ապատել մորեխի աւերմունքից առանձին արտեր, բայց շատ անգամ այս միջոցը պատճառ է դառել ուղղակի մորեխի տարածուելուն, նպաստել է զանազան տեղերում ձուաներ գնելուն: Այս եղանակով կռուելու օգուտը այն է միայն, որ մորեխի հասցրած վնասը փոխանակ մեկի սեփականութեան կամ կալուածքի՛ շատերի վերայ է տարածուում: Բայց յամենայն դէպս զարձեալ ոչ մի նպատակայարմար բան չի ներկայացնում այս և դեռ ի զուր տեղն էլ պատճառ է դառնում տարածելու վարակումը:

Նկատուած է, որ երբ մեծ քանակութեամբ մորեխ հաւաքուած է լինում մի տեղ, համաձարակը աւելի շուտ է անցնում, որովհետև այդպիսիների մէջ աւելի հեշտութեամբ կարող են առաջանալ զանազան մանրիկ կենդանիներ—պարազիտներ և սոււնիեր, որոնք պատճառ կդառնան առաջ բերելու նրանց մէջ զանազան տարափոխիկ հիւանդութիւններ: Բացի զբանից մորեխների այդպիսի մեծ բազմութեան մէջ աւելի հեշտութեամբ երեւան կզան նաև բազմաթիւ օգտակար միջատներ և թռչունների, որոնք յարձակուելով մորեխի վրայ, կարճ ժամանակուայ մէջ ահադին քանակութեամբ կոչնչացնեն: Այս պատճառով էլ մորեխների դէմ կռուելու վերոյիշեալ միջոցը որ շատ տեղերում գործադրուում է, աննպատակայարմար է և նոյն իսկ ինչպէս տե-

\* Տես Արարտա 1900 թ. համար Ժ. եր. 473: